

Արձանագրություն Ամասիա համայնքի ղեկավարի հաշվետու ժողովից

2019թ. հունվարի 19-ին Արմավիրի մարզի Ամասիա համայնքում կայացավ համայնքի ղեկավար Գ.Ավդալյանի 2018թ.-ին կատարած աշխատանքների հաշվետվությունը: Ժողովին ներկա էին համայնքի ավագանիները և համայնքի 70 բնակիչներ: 2018թ.-ին կատարվել է հետևյալ մուտքերը

	տարեկան	փաստացի
հողի հարկ	8680,0	3381,4
գույքահարկ	3490,0	3169,1
Շինություն	35	9,6
վարձ. վճարներ	142,0	36,8
դոտացիա	16425,7	16425,7
Օրենքով սահմ. Դեպք	1800,0	188,0

2016թ.-ի ընթացքում կատարված ծախսերը

	Պլան	Փաստացի
Ընդհանուր բնույթի հանր. Ծառ.	18293,0	14705,7
Շրջակա միջավայրի պաշտպ.	1900,0	480,0
Բնակչինար. և կոմունալ ծառ.	6700,0	6,748,144
Հանգիստ, մշակույթ և կրոն	1300,0	936,0
Սոցիալական պաշտպան.	500,0	-
Պարտադիր վճ. .	70,0	258,8
Պահուստային ֆոնդ	1280	1610,8
Ընդամենը	30,043	24738,7

2018թ.-ին կատարված աշխատանքները

1. Կատարվել է դաշտամիջյան ճանապարհների հողային և գլխավոր ճանապարհի մասնակի վերանորոգման աշխատանքներ:

2. Կազմակերպվել է աղբահանման աշխատանքներ:

3. Խորքային հորերի պոմպերի ընթացիկ նորոգում:

4. Կատարվել է 1,2,3,4,5,6, փողոցների լուսավորության անցկացման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց նաև 2019թ.-ի ընթացքում կատարվելիք հետևյալ աշխատանքների մասին`

1. Խմելու ջրի ջրագծի նոր խողովակների անցկացում
2. Փողոցների խաչմերուկներում լուսավորության անցկացում
3. Ներհամայնքային ճանապարհների նորոգում
4. Մանկապարտեզի գործարկում :

Արտահայտվեցին համայնքի բնակիչներ Գևորգ Զովհաննիսյանը և Վաչիկ Ենոքյանը:

Արտահայտվողները նշեցին մշակույթի տան անմխիթար վիճակի մասին և առաջարկեցին պետական ծրագրերի շրջանակներում կատարել մշակույթի տան վերանորոգման աշխատանքները ,ինչպես նաև մանկապարտեզի բացակայումը:

Համայնքի ղեկավար

Գ.Ավդալյան

